



«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <Ի՞նչ է
բուլինգը: Բուլինգի կանխարգելումը դպրոցում>

Առարկան՝ հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ստեփանյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Նորաշենի
Ավ. Իսահակյանի անվան մ/դ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն -----	3
2.Բուլեր,բուլիինգի զրհ -----	4
3. Բուլիինգը դպրոցում -----	11
4.Բռնություն: Բռնության կանխարգելումը -----	14
5.Բռնությունը կանխելու քայլեր -----	18
6.Եզրակացություն -----	20

Ներածություն

Իմ հետազոտական աշխատանքի թեման է « Ի՞նչ է բուլլինգը: Բուլլինգը դպրոցում»: Ինչու՞ որոշեցի ընտրել այս թեման ու հետազոտել:

Բուլլինգի երևույթը մեր շրջապատող միջավայրում շատ տարածված է ու նրա տարբեր դրսևորումների կանխարգելումը առավելապես դեռահաս տարիքի աշակերտների մոտ կարևոր խնդիրներից է : Աշխատանքում ներառել եմ մի քանի ենթաթեմաներ:

Սկզբում նկարագրում եմ ի՞նչ է բուլլինգը, բուլլինգի իրականացման կողմերը, բուլլերի և բուլլների հիմնական նկարագրությունները, բուլլինգի տեսակները ` ներառյալ այժմյան արդի տեսակներից կիբերբուլլինգը, տարածման տեսակները և տեսակները:

Հետազոտական աշխատանքի վերջին մասը ներառում է բուլլինգի կանխարգելման եղանակները:

Բուլլինգի ակտուալությունը դպրոցում աշակերտների միջև հարաբերություններում և աշակերտ ուսուցիչ հարաբերություններում մեր օրերում շատ տարածված է , ու արդյունքում այդ կոնֆլիկտային իրավիճակի ելքը կարող է անկանխատեսելի լինել:Վերջում առաջարկվում են մի քանի քայլեր. որանցով կկարողանանք կանխարգելել բռնության այդ տարբերակը:

Բուլլինգ կամ ահաբեկչություն ([անգլ.՝ Bullying](#)), որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ: «Բուլլինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից` սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո, իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից:

Յուրաքանչյուր երեխա առողջ և բռնություններից զերծ կյանքի իրավունք ունի: Այնուամենայնիվ, աշխարհում յուրաքանչյուր տարի միլիոնավոր երեխաներ դառնում են ֆիզիկական, սեռական և հուզական բռնությունների զոհ, տառապում բռնության անդարձելի հետևանքներից:Դիտելով մի շարք աղբյուրներ, տեսնում ենք, որ բուլլինգը

ամենուր է՝ տանը դպրոցում, ինչքան էլ որ զարմանաալի է աշխատա վայրում, բակում: Երեխաների հանդեպ բռնության կիրառման դեպքերի մեծ մասը չի բացահայտվում և չի գրանցվում: Մնալով չբացահայտված և արձագանք չստանալով՝ բռնության հետ կապված տրավման ունենում է գրեթե չվերականգնվող բացասական ազդեցություն: Բազմակի և կրկնվող բռնությունը զգալիորեն մեծացնում է հավանականությունը, որ երեխաների ու դեռահասների մոտ կզարգանան մի շարք բացասական հուզական (Էմոցիոնալ), հոգեբանական և վարքային դրսևորումներ, որոնք հետագայում կարող են լրջորեն խեղաթյուրել կամ սահմանափակել անձի ձևավորման և զարգացման բնականոն ընթացքը: Մեծ հաշվով բռնությունը վնասում է ողջ հասարակության բարեկեցությանը:

Առողջապահության, կրթության, սոցիալական ծառայությունների, երեխաների խնամքի ու պաշտպանության ոլորտի աշխատակիցները (այլ խոսքով՝ երեխաների հետ առնչվող մասնագետները) նշանակալի դերակատարում ունեն երեխաների պաշտպանության խնդրի լուծման հարցում՝ բռնության կանխարգելումից մինչև համարժեք աջակցության կազմակերպումը: Մասնագետները առնչվում են այնպիսի իրավիճակների հետ, երբ ծնողների սեփական չլուծված խնդիրները լրջորեն անդրադառնում են երեխաների խնամքի որակի և նրանց հանդեպ վերաբերմունքի վրա, ինչպես նաև այնպիսի իրավիճակների, երբ իրենց՝ երեխաների խնդիրները կարող են հանգեցնել հատուկ պաշտպանության անհրաժեշտության: Ըստ էության,

երեխայի պաշտպանությունը երեխաների և ընտանիքների հետ առնչվող ցանկացած ծառայության գործունեության անբաժան մասնիկն է, իսկ երեխաների և ընտանիքի խնդիրներով զբաղվող մասնագետները երեխաների հանդեպ վատ վերաբերմունքի, բռնության և անտեսման կանխարգելման ու նման իրավիճակների բացահայտման հարցում առաջնային դերակատարներն են: Ուստի նշված մասնագետների, պատասխանատուների գիտումը համապատասխան գիտելիքներով և

տեղեկություններով կօզնի իրենց աշխատանքը կատարել պատշաճ կոմպետենտությամբ՝ ճանաչելու բռնարարքները և համարժեք արձագանքելու նման իրավիճակներին:

Երեխայի հանդեպ բռնության երևույթը կարող է մեկնաբանվել տարբեր կերպ, ըստ այդմ էլ արձագանքներն ու պատասխանները կարող են տարբեր լինել: Նման իրավիճակը բավականին բարդացնում է մասնագետների աշխատանքը: Այսպես, մարդու իրավունքի հանդեպ հարգանքի վրա հիմնված ներկայիս մոտեցումները որդեգրվել են նաև մեր երկրի կողմից և արտացոլվել օրենսդրական դաշտում: Թեև օրենսդրական դաշտը բավականաչափ հիմքեր է տալիս պաշտպանելու երեխաներին նրանց իրավունքների ոտնահարման պարագայում, այնուամենայնիվ ավանդույթ ները, կարծրատիպերը, փորձի, ինչպես նաև գիտելիքների անբավարարությունը լրջորեն խոչընդոտում են մասնագետներին՝ իրականացնելու այդ աշխատանքները: Համապատասխան ընթացակարգերի, սոցիալական տեխնոլոգիաների և մեխանիզմների ստեղծման և մասնագետների կարողությունների զարգացման պարագայում միայն հնարավոր կլինի իրապես պաշտպանել երեխաներին բռնություններից: Ուստի կարևոր է մասնագետներին գիտելիքներով զինումը և նրանց գիտելիքների ժամանակ առ ժամանակ նորացումը՝ տեղի ունեցող փոփոխություններին և գիտա-պրակտիկ նոր մոտեցումներին համահունչ:

Առայժմ Հայաստանը չունի երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ համապարփակ և հանգամանալից կարգավորումներ: Այս պնդումը ճշմարիտ է հավասարապես կանխարգելման, վաղ միջամտության և վերականգնման ծառայությունների համար: Հետևաբար, մասնագետների գործողությունները հիմնվում են սեփական ընկալման և բարի կամքի վրա. դրանք կարող են ինքնաբուխ և հակասական լինել, երբեմն էլ՝ ոչ երեխայակենտրոն:

Բուլեր, բուլիինգի գոհ

Շատերին անծանոթ այս տերմինը գուցե առաջին հայացքից օտար մի բառ թվա, բայց երևույթը ծանոթ է բոլորիս: Բուլիինգը (անգլ. *bully`* կռվարար, բռնարար)` անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեզևանք, ծաղրանք, բամբասանքների տարածում: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած կուլեկտիվում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների ու ուսանողության շրջանում: Բուլիինգը բաժանվում է մի քանի տարատեսակների` *կիբեր բուլիինգ*, որը իրականացվում է համակարգչի միջոցով, օգտագործելով համակարգիչը որպես վնասելու միջոց, *ֆիզիկական բուլիինգ`* հարվածելու, ծեծի միջոցով, *վերբալ* կամ *բառացի բուլիինգ`* պիտակավորման, ծաղրական անունների միջոցով և *հարաբերական բուլիինգ*, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածվածորեն բացառում նրան հասարակությունից:



Ֆիզիկական բուլիինգի դրսևորում դպրոցում

Բուլինգն իրականացնում են անձինք, ովքեր գերակա դիրք ունեն իրենց շրջապատում, և այս ամբողջ պրոցեսում նրանք միայնակ չեն, հաճախ շրջապատող մարդիկ, ովքեր ուղղակի լուռ հետևում են վկաների դերերում են հանդես գալիս: Բուլիինգի ենթարկվող անձը համարվում է բուլիինգի զոհ, իսկ բուլիինգի ենթարկող անձին համարում են բուլեր: Բուլիինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, կամ այն անձինք, որոնք ունեն որոշակի ֆիզիկական, արտաքին թերություններ՝ մեծ քիթ, տգեղ արտաքին, կաղ ոտք և այլն: Բուլիինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակությունից, ընտանեկան մթնոլորտից, որը նույնպես անդրադանում է երեխայի ինքնագնահատակի ձևավորման վրա: Բուլեր դառնում են այն անձինք ովքեր իսկապես կարիք են զգում ինքնահաստատման, և երբեմն որևէ մեկին վնասելու ցանկությունը լինում է նախանձից: Փորձերը ցույց են տվել, որ բուլերները հիմնականում լինում են այնպիսի ընտանիքներից, որտեղ գործածվում են ֆիզիկական պատիժներ և նրանց ծնողները, իրենց երեխաներին դաստիարակում են այնպես, որ յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել ուժի, բռնության միջով: **Հետագո տությունների արդյունքները ցույց են տալիս, որ բուլերների (հիմնականում 6-9 դասարաններում) 60%-ն արդեն քսանչորս տարեկանում գործած է լինում ամենաքիչը մեկ հանցանք:** Բուլիինգի զոհ դարձածները հիմնականում լինում են ոչ ապահովված ընտանիքներից, երբեմն նաև ծնողազուրկ, քանի որ նման մարդկանց վիրավորելը շատ ավելի դյուրին է: Բուլիինգի զոհ դարձածները հիմնականում ներփակված են լինում իրենց մեջ, չեն կիսվում ոչ ոքի հետ, և կարծում են, որ դա ամենաճիշտ լուծումն է: Բուլիինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը տխուր, ոչ ապահով վայր: **Ըստ հետազոտության արդյունքների ութերորդ դասարանի ամերիկացի**

աշակերտների 7% մտում է տանը ամսական մեկ անգամ, քանի որ վախենում է բուլիինգի զոհ դառնալուց: Բուլիինգի զոհ դարձած մարդիկ ունենում են վատ և տհաճ զգացողություններ, նրանք ունենում են ամոթի, վախի զգացում, դառնում են դյուրագրգիռ, մտածում են, որ իրենք շատ վատն են, ունենում են շատ ցածր ինքնագնահատական, և գնալով վերանում է նրանց մեջ ինքնահաս տատվածությունը, նրանք չեն ցանկանում հաճախել դպրոց, սկսում են խուսափել հասարակական վայրերից, չեն հաճախում երեկույթների, սկսում են մեկուսանալ հասարակությունից, ներփակվում են իրենց մեջ, որը կարող է հանգեցնել հոգեկան շեղումների, և այս ամենից ազատվելու միակ ուղին, ցավոք, նրանք գտնում են ինքնասպառության մեջ: Եվ ասածս փաստելու համար կմեջբերեմ բրիտանական ամենահանրահայտ պարբերականներից մեկի 2014 թվականի դեկտեմբերի հինգի հոդվածներից մեկը, որի վերնագիրը էր. «Ռդբերգություն, տասներկու տարեկան տղան ինքնասպան է եղել, քանի որ նրան ծաղրել են երկրպագուների թիմում միակ տղան լինելու համար»: Հոդվածում ասվում է, որ Ռոնի Շիմիզան, ով սովորում էր Կալիֆոռնիայի ամենահայտնի դպրոցներից մեկում, միշտ բողոքում էր, որ բազմակի անգամներ դարձել է բուլիինգի զոհ: Որոշ ժամանակ անց Ռոնին դուրս է գալիս դպրոցից և անցնում տնային ուսուցման, բայց ծաղրանքները շարունակվում էին: Նրան ծաղրում էին թիմում միակ տղան լինելու համար, և պիտակավորում էին «gay» (սուլյնասեռական) անվանումը: Նրա ընկերները պատմում էին, որ Ռոնին շատ ընկերասեր և ժպտերես անձնավորություն էր, և երբեք ուշադրություն չէր դարձնում շրջապատում հնչող վիրավորանքներին: Այս հոդվածը կարդալուց հետո ես ուղղակի ցնցված էի, թե ուր կարող է հասնել մարդկային դաժանությունը և անսրտությունը: Ծատ դժվար է հավատալ, բայց նման բաներ Նույնպես լինում են, և կան նաև մեր շրջապատում, և ոչ ոք չպետք է թույլ տա, որ նման դեպքը փչացնի որևէ մեկի կյանքը:

Բուլի (Bully` հալածող, բուլիինգ իրականացնող անձ) դառնալու հիմնական երեք գործոն է կարելի առանձնացնել, որոնք որպես առանձին

գործոններ կամ բոլորը միասին տեղ են գտնում բուլլիի հոգեկանի մեջ:

Առաջին պատճառը «Մութ եռյակի» (Dark Triad) դասակարգված երեք հատ կանիշներն են [մաքիավելիզմը](#)՝ մանիպուլյատիվ վարքը, [Նարցիսիզմը](#)՝ ինքնասիրա հարվածությունն ու [սեփական էգոյի գերադասումը](#) ամեն ինչին և բոլորին, ու փսիխո պաթիան՝ ապրումակցման բացակայություն:

Երկրորդ գործոնը պրոյեկցիան է. [բուլլին իր վախերն ու թերությունները պրոյեկտում է զոհի վրա՝ զոհին «հաղթելով»](#) կարծես հաղթահարելով սեփական թերությունները:

Բուլլի դառնալու երրորդ պատճառը [ցածր Էմոցիոնալ ինտելեկտն է և սեփական գործողությունների անդամալի հետևանքների գիտակցման բացակայությունը](#): Արևմուտքում բուլլիինգի կանխարգելման հիմնական միջոցը հենց Էմոցիոնալ ինտելեկտի բարձրացման վրա է հիմնված: Բուլլիինգի ենթարկվող անձը սովորաբար չի կարող ինքն իրեն պաշտպանել, ինչի համար և ընտրվում է բռնարարի կողմից, որպես զոհ: [Դրանով և բուլլիինգը տարբերվում կոնֆլիկտից, քանի որ կողմերը հավասար չեն](#): Բուլլիինգը կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնության տեսքով:

Ինչպե՞ս հասկանալ, որ այն ինչ տեղի է ունենում բուլլիինգ է:

Բուլլիինգն ունի իր առանձնահատկությունները՝

1. Ուժերի անհավասար բաշխում
2. Բռնության կրկնվող բնույթ
3. Բուլլիինգի ենթարկվողի սուր Էմոցիոնալ արձագանք

Բուլլիինգից տուժում են բոլորը՝ բռնարարը, բուլլինգի ենթարկվողը, ինչպես նաև այլ մասնակիցները կամ ականատեսները: Բուլլիինգի ամկայությունը վատագույն ձևով փոխում է մթնոլորտը՝ լինի դա աշխատանքային միջավայր, լսարան, թե դասարան:

Վտանգներ

Երեխաների դեպքում նամանավանդ դեռահասության շրջանում, դպրոցական բուլլինգը առավել վտանգավոր է: Այդ տարիքում մարդը փնտրում է իր կյանքի իմաստները, իր ճանապարհը, ինքն իրեն: Ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար, հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է դառնալ նրա վստահության, որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը: Յուրահատուկ արտաքին տեսքը, տարբերվող մտածելակերպը, սիրած զբաղմունքը, առողջական առանձնահատկությունները, սեռական կողմնորոշումը, ընտանիքի սոցիալական ծանր պայմանները և այլն:

Ջետկանքներ

Բուլլինգի հետևանքները կարող են շատ ծանր լինել, նաև անդառնալի: Բուլլինգը հարկավոր է դադարեցնել, սակայն ինչպես դժվար է բուժել մի ամբողջ դպրոց համաճարակից, այնպես էլ **դժվար է «բուժել» կուլեկտիվը բռնություն գործադրելու սովորությունից**: Դա մի ամբողջ միջոցառումների փաթեթ է, հոգեբանների մասնակցությամբ ու աշխատակազմի պատրաստակամությամբ: Ավելի ցանկալի ճանապարհն է կանխարգելել իրագրելու միջոցով՝ ներգրավելով պայքարի մեջ բոլոր հնարավոր թիրախային խմբերին:

Դպրոցներում հանդիպող բուլիինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության:



Բուլիինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ: Այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, բայց դա չի նշանակում, որ այս հարցը չեն բարձրաձայնել այլ, ոչ այդքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր կամ ընդհանրապես միջավայր:

Բուլիինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլիինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում

բուլիինգի գոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: Իետագոտու թյունները փաստում են, որ ուղղակի բուլիինգի ձևը [հիմնականում բնորոշ է տղաներին](#), իսկ անուղղակի բուլիինգի ձևը՝ [աղջիկներին](#): Ուղղակի բուլիինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, երբեմն էլ միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլիինգը արդեն ավելի հասուն տարիքում՝ միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը, և՛ անուղղակի, և՛ ուղղակի բուլիինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության:

Արևմուտքում, հատկապես՝ ԱՄՆ-ում, գոյություն ունեն բուլիինգի դեմ պայքարելու հստակ մեխանիզմներ, առաջին հերթին՝ իրավական. երեխան, անկախ իր արտաքին տեսքից կամ զարգացման յուրահատկություններից, իրավունք ունի դպրոց գնալու և այնտեղ ապահով գտնվելու: Դպրոցներում տարվում է նաև հոգե թերապևտիկ աշխատանք հատկապես, բուլիինգի կանխարգելման նպատակով: Բուլիինգի կանխարգելման մեխանիզմները ևս բաժանվում են օրենսդրական և հոգեբանական լուծումների. բուլիինգի դեպքերը բարձրաձայնվում և պատժվում են, իսկ դպրոցներում գործում են տարատեսակ ծրագրեր՝ երեխաներին ապրումակցել և համագոյատևել սովորեցնելու համար, օրինակ՝ շատ արդյունավետ “Take The Lead” («Դարձիր առաջնորդ») ծրագիրը:

Հայաստանում գոյություն ունի բուլիինգի բավականին լուրջ խնդիր, սակայն դրա մասին ընդունված չէ խոսել նույնպես, ինչպես ընտանեկան կամ սեռական բռնության և այլ խնդիրների մասին: Սակայն, հայաստանյան իրականությունը հատուկ լուծումների կարիք ունի: Մի կողմից Հայաստանում խնդրահարույց է ուսուցիչների պատրաստման ողջ ինստիտուտը, մյուս կողմից, ինչպես նշվեց, հասարակությունը կարծես քողարկում է բուլիինգի դեպքերը. դրանք հաճախակի ընկալվում են որպես «պարզապես» հանցագործություններ կամ որոշ դեպքերում

մեղադրվում է հենց ինքը զոհը, և հաճախ անգամ շրջանառվում են դավադրապաշտական տեսություններ՝ հալածվածը «Էմո» էր կամ ցանկացած այլ «օտարածին» սոցիալական խմբի ներկայացուցիչ: Բուլիինգի խնդիրն, ըստ էության, բարձրաձայնվելու փոխարեն թաքցվում է և ներկայացվում որպես հայ հասարակությանը ոչ բնորոշ մի երևույթ:

Դպրոցի և մանկավարժության նպատակներից մեկն է երեխայի սոցիալականացման բարձրացումը՝ մասնավորապես, բուլիինգը կանխելու համար: Իհարկե, գոյություն ունեն կրթական համակարգեր, որոնցում կարգապահության կոշտ կանոնների շնորհիվ բուլիինգն ուղղակի տեղ չի գտնում, թեև այդ համակարգերն իրենց խնդիրներն ունեն: Սակայն, եթե երեխաներին ինքնահոսի թողնել, նրանք ինքնաբերաբար բաժանվում են հալածողների և հալածվողների: Դրա պատճառն այն է, որ մինչև որոշակի տարիք երեխաները դժվարանում են ինքնուրույն տարբերակել լավն ու վատը և հիմնվում են արտաքին օրինակների վրա՝ արդյունքում ավելի հեշտ տրվելով սեփական բնազդային ազդակներին: Սրա հետևանքով, դպրոցներում բուլիինգը սովորաբար խմբակային բնույթ է կրում. ձևավորվում է հալածողների խումբ, որը թիրախավորում է մեկ կամ երկու երեխայի, իսկ մնացած երեխաները ստիպված միանում են հալածողներին, որ չհայտնվեն հալածվողների շարքում:

Բռնություն: Բռնության կանխարգելումը:

Դպրոցում տիրող միջավայրը չափազանց կարևոր է բոլոր աշակերտների համար, և այն մեծ ազդեցություն է թողնում նրանց հետագա կյանքի վրա: Ուսումնասիրությունները փաստում են, որ դպրոցում առկա բռնությունը՝ ծեծկռտուքները, բուլինգը, լեզվակոծիվը, պիտակավորումը և նման այլ երևույթները, բացասական ազդեցություն են թողնում բոլոր երեխաների վրա՝ թե՛ բռնության ենթարկվողի ու թե՛ բռնություն գործադրողի վրա:

Ձեր երեխան անվտանգ, բարենպաստ, իր արժանապատվությունը հարգող դպրոցական միջավայրի իրավունք ունի: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան սահմանում է, որ բոլոր երեխաները կրթության, ինչպես նաև բոլոր տեսակի ֆիզիկական կամ մտավոր բռնությունից, վնասվելուց կամ չարաշահումից պաշտպանված լինելու իրավունք ունեն:

[Ի՞նչ է բռնությունը](#)

Բռնություն կա, եթե կա դիտավորություն, կրկնություն և ուժի գործադրում: Բռնարարը նա է, ով մտադրված է ցավ պատճառում: Որոշիչ գործոն է բռնության կրկնվող բնույթ ունենալը: Ի դեպ, ավելի հավանական է, որ տղաները ֆիզիկական բռնության ենթարկվեն, իսկ աղջիկները՝ հոգեբանական բռնության:

[Բռնությունը վարքագիծ է](#), այլ ոչ թե առանձին մի դեպք:

Բռնարար վարք ցուցաբերող երեխաները սովորաբար ավելի բարձր սոցիալական կարգավիճակի ներկայացուցիչ են կամ ուժային դիրք ունեն, օրինակ՝ ավելի մեծ, ուժեղ կամ ճանաչված են համարվում:

Բռնությունը կարող է տեղի ունենալ ինչպես իրական կյանքում, այնպես էլ՝ առցանց: Կիբեր-բռնությունը հաճախ տեղի է ունենում սոցիալական ցանցերի, SMS ների կամ ակնթարթային հաղորդագրությունների, էլ. փոստի կամ ցանկացած այլ առցանց հարթակների միջոցով:

[Ինչու՞ է պետք միջամտել, եթե ձեր երեխան բռնության է ենթարկվում](#)

Բռնությունը կարող է վնասակար և երկարատև հետևանքներ ունենալ երեխաների կյանքում: Բացի բռնության ֆիզիկական հետևանքներից՝ երեխաների մոտ կարող է առաջանալ հուզական և հոգեկան առողջության խնդիրներ, այդ թվում նաև դեպրեսիաներ ու անհանգստություն, ինչը կարող է հանգեցնել ոգելից խմիչքների և/կամ թմրանյութերի չարաշահման և առաջադիմության անկման:

[Որոշ երեխաներ իրենց մտահոգությունները բանավոր չեն արտահայտում: Փնտրե՛ք հետևյալ նշանները.](#)

- Ֆիզիկական նշաններ, օրինակ. անբացատրելի կապտուկներ, քերծվածքներ, կոտրված ոսկորներ, կամ լավացող վերքեր:
- Դպրոց գնալու կամ դպրոցական միջոցառումներին մասնակցելու վախ: · Անհանգիստ, նյարդայնացած կամ չափազանց լարված լինելը: · Դպրոցում կամ դպրոցից դուրս քիչ ընկերներ ունենալը:
- Հանկարծակի ընկերներ կորցնելը կամ սոցիալական

իրավիճակներից խուսափելը:

- Հագուստի, էլեկտրոնային կամ այլ անձնական իրերի կորուստը կամ ոչնչացումը:
- Հաճախակի գումար խնդրելը:
- Ցածր առաջադիմություններ:
- Բացակայությունները կամ դասի ժամին դպրոցից տուն գալու խնդրանքները · Մեծերի կողքին գտնվելու փորձերը:
- Վատ քնելը կամ մղձավանջները:
- Գլխացավի, փորացավի կամ այլ ֆիզիկական ցավերի/հիվանդությունների գանգատները:
- Պարբերաբար առցանց կամ հեռախոսով ժամանակ անցկացնելուց հետո նեղվածությունը (առանց ողջամիտ բացատրության):
- Անսովոր գաղտնապահությունը, մանավանդ՝ համացանցում գործողությունների վերաբերյալ:
- Ագրեսիվ լինելը կամ զայրույթի պոռթկումներ ունենալը:

Բռնության և չարաշահման ինը տեսակները

1. Ֆիզիկական բռնություն,
2. Սեռական բռնություն,
3. Հուզական բռնություն
4. Հոգեբանական բռնություն
5. Հոգեկան բռնություն
6. Մշակութային բռնություն
7. Վիրավորանք

8. Ֆինանսական բռնություն

9. Արհամարհան

Բռնության վերաբերյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի մոտեցումը բխում է երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի 19-րդ հոդվածից. այն է՝ պաշտպանել երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից, չարաշահումից, հոգատարության բացակայությունից, անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից ու շահագործումից, այդ թվում՝ սեռական չարաշահումից: Ստորագրելով Կոնվենցիան՝ կառավարությունը ոչ մի այն ստանձնել է սույն փաստաթղթում նշված իրավունքների կիրառման ապահովումը, այլ նաև հանձն է առել լայնորեն տարածել և հատուկ բարձրացնել Կոնվենցիայի մասին իրազեկվածությունը բոլոր հնարավոր միջոցներով:

Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը շատ լուրջ և առաջադեմ քայլ է Հայաստանում, սակայն օրենքը ինքնին չի կարող լուծել խնդիրը: Երեխաների ընտանիքում բռնությունից պաշտպանության կազմակերպումը պահանջում է հետագա քայլեր, մասնավորապես նորմատիվ ակտերի, ընթացակարգերի, ոլորտում գործող մասնագիտական աշխատուժին առաջադրվող պահանջների մշակում, ներդրում և նրանց կարողությունների զարգացում:

Նոյեմբեր ամսի երրորդ շաբաթը համարվում է բուլինգի դեմ պայքարի շաբաթ: Այդ իսկ պատճառով «Հասարակությունն առանց բռնության» ՀԿ-ն ակտիվորեն մասնակցում է այդ արշավին, որի շրջանակներում էլ կազմակերպվում է միջոցառում Երևանի դպրոցներից մեկում: Միջոցառման հիմնական նպատակն է բարձրացնել աշակերտների

իրագրվածության մակարդակը բուլիսգի վերաբերյալ, խոսել նրանց հետ կարծրատիպերից և խտրականությունից:

Բռնությունը կանխելու քայլեր

Երեխաների հանդեպ կիրառվող բռնությունը կանխելու

6 քայլերը 1. Աջակցել ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին

Ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը մեծացնում են դրական ծնողավարման մեթոդների կիրառման հավանականությունը, ինչը բնականաբար նվազեցնում է ընտանիքում բռնության վտանգը:

2. Օգնել երեխաներին ու դեռահասներին կառավարել ռիսկերն ու մարտահրավերները

Երեխաներին և դեռահասներին պետք է աջակցել հաղթահարել բոլոր խնդիրներն ու մարտահրավերները՝ առանց բռնություն գործադրելու: Դպրոցում և համայնքներում բռնությունը նվազեցնելու համար չափազանց կարևոր է նաև բռնության ենթարկվելու դեպքում օգնության դիմելը:

3. Փոխել բռնությունը և խտրականությունը քաջալերող սոցիալական նորմերն ու սովորույթները

Բռնությունը կանխելու համար որոշիչ է վերջ դնել այն թաքցնելու,

անտեսանելի դարձնելու սովորույթներին ու սոցիալական նորմերին:

4. Երեխաներին անհրաժեշտ ծառայությունների հիմնադրումն ու տրամադրումը

Քաջալերել երեխաներին դիմել մասնագիտական աջակցության և պատմել բռնության դեպքերի մասին՝ նույնպես օգնում են հաղթահարել բռնությունը:

5. Ներդնել երեխաներին պաշտպանող օրենքներ և համապատասխան քաղաքականություն վարել

Երեխաներին պաշտպանող օրենքների ներդրումն ու կիրառումը/պահպանումը հասարակության համար հստակ ազդակ է, որ բռնությունն անընդունելի է ու պատժելի:

6. Վիճակագրության հավաքագրումը և հետազոտությունները

Բռնության մասին ամեն ինչ իմանալով՝ որտեղից է գալիս, ինչ ձևեր ունի, որ տարիքային խումբն է ամենաշատը ենթարկվում բռնության և այլն, հնարավոր է կանխարգելման ռազմավարություն ձևավորել և պլանավորել: Դա հնարավորություն է տալիս առաջխաղացումը դիտարկելու թվային և ժամանակային թիրախներ սահմանել և վերջ դնել բռնությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ձեր երեխային անվտանգ պահելու առաջին քայլը թե՛ առօրյա կյանքում, և թե՛ առցանց, համոզվելն է, որ նա գիտի՝ ինչ է բռնությունը:

Հաճախ և ազատ խոսե՛ք ձեր երեխաների հետ: Ամեն օր խոսե՛ք ձեր երեխաների հետ և հարցրե՛ք դպրոցում իրենց անցկացրած ժամանակի մասին՝ հետաքրքրվելով ոչ միայն դասերով և կոնկրետ գործողություններով, այլև նրանց զգացմունքներով: Խոսե՛ք ձեր երեխաների հետ այն մասին, թե ո՞րն է իրենց կարծիքով դպրոցում, փողոցում, բակում և առցանց լավ ու վատ վարքը: Անկաշկանդ հաղորդակցություն ունենալը կարևոր է, որպեսզի ձեր երեխաները իրենց հանգիստ զգան իրենց կյանքի մասին ձեզ պատմելուց:

Բարություն ու կարեկցանք սերմանե՛ք ձեր երեխայի մեջ: Գոյություն ունի բռնության երեք կողմ՝ տուժող, բռնարար և վկա: Նույնիսկ եթե երեխաները բռնության զոհ չեն հանդիսանում, նրանք կարող են օգնել կանխել այն՝ իրենց հասակակիցների նկատմամբ հարգալից և բարի լինելով: Կամ եթե նրանք

ականատես են լինում բռնությանը, ապա կարող են պաշտպանել տուժածին, առաջարկել աջակցություն և (կամ) հարցականի տակ դնել բռնարար վարքագիծը:

Օրինակ ծառայե՛ք: Երեխաները իրենց ծնողներից են օրինակ վերցնում, ուշադիր եղե՛ք ու հետևե՛ք՝ ինչպես եք վերաբերվում այլ մարդկանց և ինչպես եք ձեզ պաշտպանում համացանցում:

Չետևե՛ք ձեր երեխայի առցանց ակտիվությանը: Ծանոթացե՛ք ձեր երեխայի կողմից օգտագործվող պլատֆորմներին, բացատրե՛ք նրան, թե ինչպես են փոխկապակցված առցանց և անցանց աշխարհները, և զգուշացրե՛ք նրան այն տարբեր ռիսկերի մասին, որոնց հետ կարող է բախվել համացանցում:

Չամոզվե՛ք, որ ձեր երեխան գիտի՝ ինչ է բռնությունը և ինչը բռնությունն է: Եթե երեխաները իմանան, թե ինչ է բռնությունը, կկարողանան ավելի հեշտությամբ նկատել այն՝ անկախ նրանից, դա պատահել է իրենց, թե մեկ ուրիշի հետ:

Գրականություն

1. «Երեխաների պաշտպանությունը բռնություններից»

Ձեռնարկ վերապատրաստվողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար

2. «Բուլինգը երևանյան դպրոցական միջավայրում» սոցիոլոգիական նետազոտություն Ջեդ. Ա. Համբարձումյան
3. Save the Children world Vision Հարցման արդյունքներ «Երեկաների կարծիքով. . . »
4. Տես՝ <https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullying-overview.pdf>
5. Տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>
6. unicef ԲԵՅԻՍԵՖ «Բռնություն: Սկսենք կանխարգելուց»
7. Բուլինգ – Վիքիպեդիա
8. Բուլինգ | Մեդեքս
9. «Ի՞նչ է բուլինգը» Համագործակցության ծրագրեր
10. «Բուլինգը դպրոցում. պատճառներ ջ հետևանքներ» Այբ դպրոց
11. Աշխարհում դեռահասների կեսը դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվում է բռնության իրենց հասակակիցների կողմից. ՅՈՒՆԻՍԵՖ
12. [UNICEF Հայաստան](#)
13. Բուլինգ | Ռուբեն Վարդազարյան | Սամվել Մարտիրոսյան
14. [Բուլինգը դպրոցում.pdf](#)
15. [Բուլինգի-դրսևորումները-ուսումնական-հաստատություններում-և-դրանց կանխարգելման-ուղիները.pptx.pdf](#)